

Թ Ի Ի 26

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ  
ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ

ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

ՎԵՐԱԲԱՑՈՒՄ 1911—12 ՇՐՋԱՆԻ

ԵՐԵՎԱՆԻ ԱՆՈՎԱՆ ՎԵՐԱԿԱԶՄՈՒԹԵՆԷՆ ԵՏՔԸ

ՆԻՍ ԻԶ.

10 ՓԵՏՐՈՒՐ 1912



Տպագրութիւն Տ. ՏՕՂՐԱՄԱՃՆԱՆ  
Կ. ՊՈԼԻՍ, Պապր-Ալի ձառտէսի, Թիւ. 49

1912

# Ա.ԶԳԱՅԻՆ ԸՆԴՀ. ԺՈՂՈՎ

ԲԱՑՈՒՄ 1911—1912 ՆՍՏԱՇՐՁԱՆԻ

ՆԻՍՏ ԻԶ-

10 ՓԵՏՐՈՒԱՐ 1912

Ն Ա Խ Ա Գ Ա Շ. — ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԷԱՅՐ

Ա Տ Ե Ն Ա Պ Ե Տ. — ՄԱՆՈՒԿ ԷՅԵՆՏԻ ԱԶԱՐԵԱՆ

## ՕՐԱԿԱՐԳ

1. — Տեղեկագիր Ասենապեսաց Դիւանի ի մասին Երուսաղէմի Պատրիարքական ընտրութեան :
2. — Ընտրութիւն խորհրդարանական յանձնաժողովոյ, Երէցեան Ա. ի մասին կատարելի փնտրութեան :
3. — Տեղեկագիր Ասենապեսաց Դիւանի ի մասին Օրմանեան Ա. ի ամբասանութեանց :
4. — Տեղեկագիր Ասենապեսաց Դիւանի, ի մասին Թրքահայոց կողմէ Ամենայն Հայոց Հայրապետութեան մասուցանելի գրին :
5. — Խնդիր Եուանէսուի :

(Նիստը բացուեցաւ ի ներկայութեան 64 երեսփոխաններու, որոց թիւը յետոյ յանգեցաւ 71ի) :

ՅԱԽԱԿՅԱԿԱՆ ԱՐՏԱՅԱՅՈՒԹԻՒՆ

ԱՏԵՆ. ԷՅ. — Տիւրք պարտականութիւն

մը ունինք կատարելիք այսօր : Մեր պաշտօնակիցներէն Յակոբ ԷՖ. Սթամպուլեան, անակնկալ կերպով կնքեց իր կեանքը, սուգի ենթարկելով ոչ միայն իր ընտանիքը, այլ եւ զմեզ, որ ականատես եղած էինք մեր հանգուցեալ պաշտօնակցին աշխատութեանց իրեւ վարչու-

Թեան ատենապետ եւ իբրեւ երեսփոխան, ու մօտէն գիտակ էինք իր կարողութեանց եւ բարեմասնութեանց, Յանուն ժողովոյ մեր խորին ցաւը յայտնելով հանգուցելոյն պարագայից, կը հրաւիրեմ նախագահ Սըրբազանը որ օրհնէ հանգուցելոյն յիշատակը:

(Նախագահ Սըրբազանը «հոգւոց հանգուցելոց» աղօթքը կարդալով, ժողովականք յոտնկայս արտայայտեցին իրենց ցաւակցութիւնը):

**ԲԱՅԱԿԱՅՈՒԹԻՒՆ ԵՐԵՍՓՈՒԱՆԱՅ**

**ԱՏԵՆ. ԷՖ.** — Ոսկան էֆ. Մարտիկեան այսօրուան նիստէն բանաւոր պատճառաւ բացակայութիւնը հաղորդած է գրաւորապէս, կ'արձանագրենք զինքը օրինաւոր բացակայ:

**ՀՐԱԺԱՐԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒՅԱՆՈՒԹԵՆԷ**

**ԱՏԵՆ. ԷՖ.** — Միհրան էֆ. Մուրատեան հետեւեալ հրաժարականը զրկած է:

(Ատենադպիր էֆ. կարդաց հետեւեալ գիրը):

Վսեմաչուք ատենապետ էֆէնտի

Ազգ. Երեսփ. Ընդհ. ժողովոյ

Նկատելով որ անհատական անչափ գործերով եւ ազգային մէկէ աւելի բազմապահանջ պաշտօններով չափազանց ծանրաբեռնուած վիճակս արգելք կ'ըլլայ ինձ կանոնաւորապէս ներկայ ըլլալ Պատկ. ժողովոյդ նիստերուն եւ հետեւելով իր գործունէութեանց օգտակարութեան բաժին մը գէթ ունենալ, խղճի պարտք կը համարիմ վայրապար չգրաւել ինձ յատ-

կացուած աթոռը, ուստի եւ կը խնդրեմ որ հաճիք ընդունիլ հրաժարականս:

Մնամ խորին յարգանքով  
Նախկին երեսփ. Գուրուչէշմէի  
Մ. Գ. Մուրատեան

Կ. Պոլիս, 23 Փետր. 1912

**ԶԱՅՆԵՐ.** — Պարզ հրաժարական է:

**ՀԱՅԿ ԽՕՃԱՍՍՐԵԱՆ ԷՖ.** — Մուրատեան էֆ. իր հրաժարականին պատճառ կը ցփնէ ոչ թէ իր անհատական գործերը, այլ կ'ըսէ թէ ազգային պաշտօններով ծանրաբեռնուած ըլլալով, չկրնար շարունակել երեսփոխանական պաշտօնը: Ես կը կարծեմ որ պատուաբեր կ'ըլլայ մերժել իր հրաժարականը:

(Ատենապետ էֆ. քուէի դնելով սոյն հրաժարականը, ժողովը 11ի դէմ 26 ձայնով մերժեց Մուրատեան էֆ.ի հրաժարականը):

**ԱՏԵՆ. ԷՖ.** — Շահրիկեան էֆ. երկու գիր ունի որոցմով կը գանգատի նախ թէ իր հարցումները Երուսաղէմի խնդրոյն խնդրոյն համար անպատասխանի մնացեր են եւ թէ ժողովիս մէջ իր գրերը չեն կարդացուած: Մայր Դիւանի կողմէ կուգամ յայտարարել թէ ոչ մէկ գիտում կայ, Շահրիկեան էֆ.ի նամակներուն ընթերցումը յետաձգելու համար: Անցեալ անգամ խնդրեցի Շահրիկեան էֆ.էն յետաձգել իր նամակին ընթերցումը ու ինքն ալ հաճեցաւ, հետեւաբար կարծեմ այս բացատրութիւնը գոհացուցիչ կը նկատուի:

**Պ. ՓԱՓԱՋԵԱՆ ԷՖ.** — Շահրիկեան էֆէնտի կը գանգատի որ անպատասխանի մնացեր են իր հարցումները, վարչութեան կը մնայ պատասխանել անոնց, Այդ խնդիրներուն զլիաւորը՝ Երուսաղէմի կնճիտն է: Որքան ալ Շահ-

րիկեան էֆէնտի իրաւունքներ ունի այդ գործին մէջ եւ ճշմարտութիւններ կան գործին մէջ եւ սակայն հարկ կ'ըլլայ որ իբրեւ տէրը այդ հարցապնդումներուն ներկայ գտնուի ինք, սակայն միեւնոյն ատեն վարչութիւնը կրնայ բացատրութիւն մը տալ այսօր այդ մասին:

**Գ. ԱՍԼԱՆԵԱՆ ԷՖ.** — վարչութիւնը Երուսաղէմի պատրիարքական ընտրութեան խնդրոյն վրայ իր տեսակէտը պարզած է այս ժողովին առջեւ եւ պէտք եղած բացատրութիւնը տալով, այդ մասին կատարուած գործողութեան վերաբերեալ գրերն ալ հոս զրկած է: Հետեւաբար նոր բան մը աւելցնելիք չունի եւ համաձայն է որ պատրիարքական ընտրութիւնը կատարուի:

**Ռ. ԶՍՐԴԱՐԵԱՆ ԷՖ.** — Տրուած բացատրութիւնը, Շահրիկեան էֆ.ի ժողովիս ըրած դիմումին պատասխանը չէ, որովհետեւ Շահրիկեան էֆ. լսկ Պատրիարքական ընտրութիւնը կատարելու խնդրէն առաջ նպատակ ունի արմատական բարեկարգութիւն մը յառաջ բերելու Երուսաղէմի մէջ: Կը յիշենք որ աւելի առաջ ըսուեցաւ թէ թղթածրարը Փափաղեան էֆէնտի մօտ կը գտնուի, հետեւաբար պէտք է բացատրութիւն տրուի այս կէտերուն համար:

**Դ. Տ. ՄՈՎՍԷՍԵԱՆ ԷՖ.** — վարչութիւնը բացատրութեան կը հրաւիրուի, օրակարգի մէջ գտնուած խնդրոյ մը համար, եւ այն ատեն միայն կրնայ վիճաբանութիւն տեղի ունենալ: Երուսաղէմի պատրիարքական ընտրութեան խնդրը մեր օրակարգին մէջն է, բայց այսօր վիճաբանութեան չենթարկեցինք որ գիտնանք թէ ի՞նչ կը խորհի վարչութիւնը, ի՞նչ պիտի ընէ, ի՞նչ չպիտի ընէ, հետեւաբար աւելորդ է պահանջել իր կարծիքը:

**Պ. ՓԱՓԱՋԵԱՆ ԷՖ.** — վարչութիւնը առկէ առաջ նիստի մը մէջ յայտարարեց որ Երուսաղէմի խնդրին քննութիւնը յանձնած է իր անդամներէն: Վահան էֆ. Փափաղեանի որ իր տեղեկագիրը պիտի բերէ: Սըրբ պէտք կ'ըլլայ գիտնալ բնականաբար թէ Փափաղեան էֆ.ի հրաժարումը այս քննութիւնը շարունակուեցա՞ւ թէ ոչ: Երուսաղէմի աթոռը երկար ատեն թափուր չկրնար մնալ, գիտե՞ք եւ լսած էք հարկաւ որ Եաֆայի մէջ Երուսաղէմի վանքին սեպհական կալուածներէ մէկը գրաւուեցաւ: Հաւանական է որ ուրիշ կալուածներ ալ գրաւուին, ուստի ժամ առաջ պէտք է կատարուի պատրիարքական ընտրութիւնը, որպէսզի այս օտնձգութիւնները արգիլելու համար վանքը ունենայ իր օրինաւոր գերը, սակայն սկզբունքի խնդիր մը կայ այստեղ, մենք աւանց պէտք եղած կերպով լուսաբանուելու պիտի կատարենք այս ընտրութիւնը:

**ԱՏԵՆ. ԷՖ.** — Այսքան երկար վիճաբանութեան ոչ պէտք կայ, ոչ ալ իրաւունք ունինք, քանի որ խնդիրը մեր օրակարգի առաջին խնդիրն է: Այժմ 71 երեսփոխաններ ներկայ են, եթէ կ'ուզէք անցնիւք օրակարգին, այն ատեն ամէն երեսփոխան կրնայ իր կարծիքը յայտնել: Սակայն ատենական գործողութեանց մէջ մէկ քանի գրեր կան պէտք է նախ անոնք վերջացնենք:

**Տ. ՀՄԱՅԵԱՆ Ս.** — Մինչեւ մէկ ժամ իրաւունք ունինք զբաղելու ատենական գործողութիւններով, Երբ կարգը դայ մենք պիտի խօսինք, ինչ որ պէտք է: Ծիչդ է որ Երուսաղէմի խնդիրը շատ կարեւոր է, Տեղապահը Պոլիս եկած նստած է եւ պարտքը 7 տարուան մէջ 40,000 ռակիի բարձրացած է, սակայն ատկէ շատ աւելի կարեւոր խնդիրներ կան, որ մեր օրակարգին մէջ պէտք է գրուէին իբրեւ առաջին խնդիր եւ ատիկայ ալ Հայաս-

տանի բարեկարգութեան հարցն է: Մայր Դիւանը իրաւունք չունի առանց ժողովի կամքին օրակարգը կազմելու իր ուղած կերպով:

ԱՏԵՆ. ԷՖ. — Մայր Դիւանը օրակարգը կր պատրաստէ ժողովին որոշման հետեւելով, հետեւաբար Դիւանին դէմ ձեր ըրած ակնարկութիւնը խստիւ կը մերժեմ:

Ա. ՎՈՒՄԵԱՆ ԷՖ. — Ես կ'ուզէի գիտնալ թէ երբ օրակարգի անցնի ժողովս եւ այս հարցապնդման վրայ խօսք ըլլայ, Վարչութիւնը պատրաստ է աւելու հարկ եղած պատասխանը:

Գ. ԱՍԼԱՆԵԱՆ ԷՖ. — Վարչութիւնը պատրաստ է աւելու պատասխանը երբ խնդրոյն անցնի ժողովս:

Տ. ՀՄԱՅԵԱՆ Ս. — Այս խնդրէն շատ աւելի կարեւոր է Հայաստանի բարեկարգութեան խնդիրը:

ԱՏԵՆ. ԷՖ. — Դուք Սրբազան ժողովը կը խանգարէք, ի կարգ կը հրաւիրեմ զձեզ:

(Այս պահուստ ժողովը մերժելով ժողովին մէջ, Ատենապետ ԷՖ. 10 վայրկեանի համար դադարեցուց նիստը):

ՀԱՅ ՀՈՒՄԷԱՆՆԵՐ ՊԱՏՐԻԱՐԿԱՐԱՆԻ ԳԻՐԸ

ԱՏԵՆ. ԷՖ. — Նիստը վերաբացուած է: Կը յիշէք որ ասկէ առաջ ժողովս համակրական ցոյց մը ըրաւ Հայ Հոռմէականաց նկատմամբ, որոնք իրենց ազգային իրաւունքները կը պահպանեն, գնահատելի եւ եռանդուն ոգիով մը: Մայր Դիւանս ժողովին այս արտայայտութիւնը հաղորդած ըլլալով Հայ Հոռմէականաց ընդհանուր ժողովին, այս անգամ նոյն ժողովին կողմէ հետեւեալ պատասխանազիրը հասած է մեզ:

(Ատենապետ ԷՖ. կարգաց հետեւեալ գիրը):

Վսեմաշուք Տէր,

Պատիւ ունեցանք ստանալու Ձեր Վսեմութեան 1912 Յունուար 24 թուակիր մէկ պաշտօնագիրը, որով ազգային իրաւունքներու պաշտպանութեան համար հասարակութիւնս եւ անոր ներկայացուցիչ Ազգ. ժողովին մղած պայքարին առթիւ Ազգ. Պատկ. Երեսփոխանական ժողովիդ համակրութիւն քուէարկած ըլլալը կը ծանուցանէք:

Ազգ. ժողովս խիստ զգածուած իր նկատմամբ ցոյց տրուած այդ համակրական արտայայտութիւնէն, կը փութայ իր ջերմագին շնորհակալութիւններն հաղորդել Պատկ. Երեսփոխանական ժողովիդ, եւ անկասկած է թէ երկու համազգի ժողովներու մէջ տիրող եղբայրակցական այս ազնիւ զգացումներն իրենց բարեբար արձագանքը կ'ունենան նաեւ հասարակական մէջն շրջանակներու վրայ յօգուտ եւ ի բարգաւաճումն համայն Հայ ազգին:

Այս ակնկալութեամբ կը խնդրենք որ հաճիք ընդունիլ Վսեմ. Տէր մեր յարգանաց հաւաստիքը:

Ի դիմաց Ազգ. ժողովոյ Կ. Հայոց

Ատենապետ Ա. ԻՃՏԻՃԵԱՆ Ա. Երամ

(ժողովը ծափահարութեամբ լսեց սոյն գիրը):

ՀԱՐՑՈՒՄ ԵՐԵՍՓՈՒՍԱՆՍՑ

Ա.

ԱՏԵՆ. ԷՖ. — Մէկ քանի երեսփոխաններու կողմէ Բանկալթիի գերեզմանատան խնդրոյն նկատմամբ հարցումներ կան, կը յանձնեմ ձեր ուշադրութեան:

(Ատենապետ ԷՖ. կարգաց հետեւեալ գրերը):

Վսեմաշուք Ատենապետ ԷՖ.

Ազգ. Երեսփ. Ընդհ. ժողովոյ

Բանկալթիի ազգային գերեզմանատան խնդրոյն համար անցեալ 1911 Յունիս 24ին գրութեամբ մը դիմում ըրած էի Ազգ. ժողովոյ իմանալու համար ձեռք առնուելիք միջոցներն. այն ատեն մեր պաշտօնակիցները թող չը տուին խօսիլ եւ վստահեցուցին թէ լաւ վիճակի մէջ է եւ գերեզմանատան մասին խօսիլ ու վիճաբանիլ կը վտանգէ գործին յաջողութիւնը:

Արդ՝ լրագիրներէն կը տեղեկանամ գերեզմանատան խնդրոյն ծանրակշիռ վիճակը, եղած դիմումներն, բայց թէ՛ կեղր. Վարչութիւնն ինչ կը խորհի, ինչ միջոցներ ձեռք պիտի առնէ ազգային այս դարաւոր եւ նուիրական սեպհականութիւնը փրկելու քաղաքապետութեան օտնձգութիւններէն եւ հանդիսա թողուլ մեր հայրերուն ոսկորները իրենց վերջին հանգստարանին մէջ:

Աղօթարար Հ. Յայկ. Դիմախեան

20 Յունուար 1912

Վսեմաշուք Ատենապետ ԷՖէնտի

Ազգ. Երեսփ. Պատկ. ժողովոյ

Թերթերէն իմացանք թէ, Հայոցս Բանկալթիի գերեզմանատունէն, թաղապետութեան կողմէն առնուելիք գեանին համար, Վարչութեան եւ կառավարութեան միջեւ համաձայնութիւն գոյացած է առնուելիք գեանին համար 12,000 ոսկի իբր փոխարժէք:

Արդ կուգամ հարցնել Պատկ. Վարչութեան թէ՛ թերթերու գրածները ճիշդ են, եթէ ցարդ 12,000 ոսկին գանձուած չէ, եղած պայմանները որ աստիճան ապահով

եւ վստահելի են, եւ թէ 12,000 ոսկին ե՞րբ պիտի գանձուի:

Մնամ յարգանք Ազգային երեսփոխան Յ. Կ. Ճանկիլեան

10 Փետր. 1912

Վսեմաշուք Ատենապետ ԷՖէնտի

Ազգ. Երեսփ. Ընդհ. ժողովոյ

Մոռցուած չէ անշուշտ որ ոչ շատ ուշ ժամանակի մէջ Երեսփ. ժողովոյս առջեւ նկատի առնուեցաւ յարանուանակից ազգայնաց պատր. ցաւալի կացութիւնը, հայասէր Բիէն Բիլեարի մահուան առթիւ ազգովին արտայայտելի ցաւակցութեան խնդիրը, ինչպէս նաեւ Օսմ. Երեսփ. ժողովոյն համար ընտրելի հայ երեսփոխաններու կարեւորութիւնը, որոնց մասին ատենական գործողութեամբ պատշաճ տնօրէնութիւններն ու որոշումները արուեստն: Ի շարս որոց անկասկած եմ թէ Պատկ. Երեսփոխանաց համար նուազ նկատումն արժանի հարց մը չպիտի նկատուի Բանկալթիի հայ ազգին սեփականութիւնը ճանչցուած պատմական գերեզմանատան հողի խնդիրը որ շուրջ 9 ամսէ ի վեր ծանր զբաղում պատճառով է ազգային իշխանութեան որ ի վերջոյ կարի ախուր վիճակի մը յանգեցաւ յայս ժողովրդեան:

Այս մասին շատերու փափագին համաձայն կը խնդրուի որ Յարգելի Վարչութիւնը այս խնդրոյն առթիւ մինչեւ ցարդ իր ձեռք առած օրինական միջոցները, կառավարութեան հետ ունեցած յարաբերութեան արդիւնքը բարեհաճի ի պաշտօնէ հաղորդել Պատկ. Երեսփոխանութեան առ ի խորհրդածութիւն, եւ գոնէ առ ի արձանագրութիւն:

Խորին յարգանք Մնամ աղօթարար Եզնիկ Մ. Վ. Պապանեան

10 Փետր. 1912

Վսեմաշուք Ատենապետ էֆ.

Ազգ. Երեսփ. Պատկ. Ժողովոյ

Բանկալթիի ազգային դերեզմանատան ծանօթ խնդրոյն առթիւ, հայ ժողովուրդին առջի օր գործնականապէս ցոյց տուած ազգային-կրօնական նախանձախնդրութիւնն ըստ ամենայնի գովեստի եւ գնահատութեան արժանի նկատելով, կ'առաջարկեմ որ, Պատկ. Ժողովդ՝ այդ մասին յայտնէ իր գոհունակութիւնն ու չնորհակալութիւնը, հրաւիրելով միանգամայն Ազգ. Վարչութիւնը, որ Պատկ. Ժողովիդ հազորդէ եղած կարգադրութիւնը, ի լուսարանութիւն :

Յարգանք  
Ազգ. Երեսփոխան  
Ա. Յ. Կասպաբեան

Ղալաթիա, 10 Փետր. 1912

Վսեմաշուք Ատենապետ էֆէնտի

Ազգ. Երեսփ. Ընդհ. Ժողովոյ

Կր փափաքէի գիտնալ թէ, ի՞նչ եղած է Բաղ. Ժողովոյ գերը Բերայի գերեզմանատան խնդրոյն մէջ, թէ ի՞նչ աստիճան իրաւացի են այն զրոյցները, որ կը շրջին ժողովրդեան մէջ թէ Բաղ. Ժողովոյ անգամներէն մի քանին իրենք իրենց, առանց Խառն Ժողովոյ հաւանութիւնն ստանալու, քաղաքապետութեան հասցէին չնորհակալութիւն յայտնող թագրի մը պատրաստած, եւ անոր յղումը պահանջած են. ասիկա գործին կարգադրութեանէն առաջ, եւ քաղաքապետութեան ազգին իրաւունքը մերժող ծանօթ թէզքէրէին վրայ :

Մնամ յարգանք  
Ազգային Երեսփոխան  
Ն. Շիրինեան

10 Փետր. 1912

Գ. ԱՍԼԱՆԵԱՆ էֆ. — Վարչութիւնը

պատրաստ է հարկ եղած տեղեկութիւնը տալ այդ մասին, բայց կ'ուզենք որ նախ որ ինչները խօսին : Միայն կը խնդրենք որ ամէն ոք իր գովեստները ընելով ժամանակ չանցնէ :

Տ. ՀՄԱՅԵԱԿ Ս. — 1911 Յունիս 13ին

Տեղապահ Սրբաղանին օրով, այս խնդրոյն վրայ ազգային իշխանութեան ուշադրութիւնը հրաւիրեցի, բայց այն ատեն ըսուեցաւ որ այդ տեսակ բաներ կը վտանգեն ազգին շահերը, թէ խնդիրը լաւ վիճակի մէջ է, ու այդ գիրը յղուեցաւ Վարչութեան որ մինչեւ հիմայ ո'ւր է պատասխան չէ բերած, մինչդեռ հիմայ նոր կնճիտներ երեւան ելած են : Ես այս առաջարկը կ'ընեմ, որպէս զի Վարչութիւնը աչքաբաց գտնուի, մենք շատ բան կորսնցուցինք ատենին չչարժելով, իրաւ է որ քիչ շատ բան մը եղաւ, սակայն կարելի էր շատ աւելին ձեռք բերել, եթէ նախապէս խնդիրը լրջօրէն ձեռք առնուէր : Կը խնդրեմ որ Ազգ. Վարչութիւնը հսկէ արժիւի աչքերով ազգին շահերը պաշտպանելու, որպէս զի անակնկալ առջեւ չգտնուինք :

Հ. ԽՕՃԱՍՍՐԵԱՆ էֆ. — Բանկալթիի

գերեզմանատան խնդիրը փակուած խնդիր մը չէ, Վարչութիւնը իր բանակցութիւնները կը շարունակէ կատարութեան հետ, հետեւաբար Ազգ. Ժողովը պէտք է սպասողական դիրքի մէջ ըլլայ : Ազգովին պէտք է զօրացնել Վարչութեան գիրքը, անպատ կամ նպատակոր կարծիքներ աւելորդ են : Ժողովը մէկ պարտք մը միայն ունի հիմայ, հաւաքաբար պէտք է չնորհակալութիւն եւ գոհունակութիւն յայտնէ ժողովուրդին եւ կղերին, որոնք միշտ արթուն են ազգային իրաւանց ու պատուին պաշտպանութեան համար : Եթէ Վարչութիւնը աւարտէ ամէն բան, այն ատեն կրնանք գնահատել կամ ըննադատել իր ընթացքը, ուստի հիմայ դեռ չատ

կանխահաս է, հետեւաբար պէտք է փակենք :

Տ. ՀՄԱՅԵԱԿ Ս. — Հայ եկեղեցակա- նութիւնը իր պարտքը կատարեց, հետեւաբար գոհունակութիւն ակնկալելու ուէ իրաւունք չունի :

Պ. ՓԱՓԱՋԵԱՆ էֆ. — Խնդիրը աւար- տած չէ, հետեւաբար այս պարագաներու մէջ եղած հարցումներ եւ հարցասպնդում- ներ անօրուա են բոլորովին : Խնդիրը Վարչութեան ձեռք է տակաւին, հետեւաբար կանխահաս կ'ըլլայ այդ մասին կարծիք յայտնել, լաւ կ'ըլլայ առաջարկել որ Վարչութիւնը գործը աւարտելէն յետոյ տեղեկագիր մը բերէ :

ՉԱՅՆԵՐ. — Վարչութիւնը պատրաս- տակամութիւն յայտնեց սակայն պատաս- խանելու :

Յ. ՃԱՆԿԻԻԼԵԱՆ էֆ. — Ես իմ գրիս մէջ յիշատակած եմ մէկ երկու պարագայ, եթէ սուտ են ըսելիք չկայ, բայց գործին իրերադարձութիւնները ամէնուս ալ ծա- նօթ ենք, մենք գիտենք որ ճամբաներ բանալու համար, երկաթուղիի կամ թրամ- վայի ընկերութիւնները իսկ նախ կալ- ուածին փոխարժէքը կը վճարեն յետոյ կը քակեն, ինչո՞ւ միեւնոյնը չեղաւ Բանկալ- թիի կալուածներուն համար :

Մ. ՀԱՅԿԱՋՆ էֆ. — Չայնակցելով Շիրինեան էֆ.ի դրածին, անպատեհ կը համարիմ Վարչութեան անդամներէ մէ- կուն՝ Մուրատեան էֆ.ի ընկերանալու պարագան : Մուրատեան էֆ.ի յարգելի եւ պատուաւոր անձ մը ըլլալը ամէն տարա- կոյսէ վեր է, սակայն պատեհ չէ որ Վարչութեան անդամի մը հետ ներկայա- նար քաղաքապետին բանակցելու համար, քանի որ երբ քաղաքապետութիւնը կալ- ուածոց Հոգաբարձութեան հետ բանակցիլ

ուզեց՝ անոնք մերժեցին՝ Պատրիարքա- ըանը ցոյց տալով, արդ ինչպէս կ'ըլլայ որ վերջէն իբր բանագնաց կ'ընտրուին եւ կը ներկայանան...

Թ. ԱՐԵՒԵԱՆ էֆ. — Դուք ինչպէս որ Եպարծոսին ներկայացաք, այն ալ այդ կերպով գացեր է :

Մ. ՀԱՅԿԱՋՆ էֆ. — (Շարունակելով) Պատասխանեմ՝ ես շատ նեղ պարագայի մէջ, Արշարունի Սրբազանի հրաւերին պա- տասխանելով դացի, բայց ասիկայ Մու- րատեան էֆէնտիի զիմուսի պարագայէն տարբեր է :

Տ. ԵՋՆԻԿ Վ. ՊԱՊԱՆԱՆ. — Բանկալ- թիի գերեզմանատան խնդիրը վերջացող եօթնեակին մէջ դարձեալ զբաղեցուց մեզի ու աւելի ճիշդ խօսելով, ցաւ պա- ճառեց մեր սրտին : Սահմանադրական շրջանին հողային զրկումներու ենթար- կուեցանք, այսօր ալ կացութիւնն ունին է եւ 40,000 ոսկի արժողութեամբ կալուած մը, ինչպէս է Եէտիզուլէի Երուսաղիմա- պատկան ազարակը գրաւման կ'ենթար- կուի...

Մ. ՀԱՅԿԱՋՆ էֆ. — (Ընդմիջելով) Պատճառ եղողը գետինն անցնի :

Տ. ԵՋՆԻԿ Վ. ՊԱՊԱՆԱՆ. — (Շարու- նակելով) Եւ այս օրերուն մէջ, ծայրաս- տիճան խտտապահանջութիւն մը կ'երեւի կալուածական դիզուած տուրքերը գան- ձելու 30, 100, 200 ոսկի ազբատ եկեղե- ցիներու սնտուկէն, որոնք ինքզինքնին հողալու եւ մատակարարելու վիճակին մէջ չեն : Այս մասին քանիցս բողոքեցինք արդէն, արդեօք Բերայի պատմական գե- րեզմանատունը պիտի գար ամբողջացնե- լու այս շարքը, մինչդեռ գերեզմանատու- նէն քանի մը քայլ անդին զօրանոցին ցցուած պատը աչքի սուղեւ կը մնայ :

Այս իրերադարձութիւնները կը ցուցնեն որ հայութեան հորիզոնը ամպամած պիտի մնայ, Վարչութիւնը պէտք է հետեւի հողային խնդրոյն դարձուածներուն եւ զիտակից ընէ ժողովս, նոյնպէս գերեզմանապան խնդիրը, որ հողային խնդրոյն մէկ մասն է, բոլոր երեւոյթներով պէտք է գրաւէ մեր ուշադրութիւնը:

Մ. ՀԱՅԿԱԶՆ ԷՖ. — Եզնիկ Վ. փոխանակ այստեղ այս խօսքերը ընելու եթէ Հայաստան երթար եւ առաջնորդ ըլլար աւելի օգտակար կ'ըլլար:

Ա. ԳԱՍՊԱՐԵԱՆ ԷՖ. — Մանրամասնութեան մէջ մտնել չենք ուզեր եւ կը սպասենք վերջնական եզրակացութեան, լաւագոյն կ'ըլլայ փակել այս խնդիրը այսօրուան համար, շնորհակալութիւն եւ գնահատութիւն յայտնելով անոնց որ աշխատութեան բաժին ունեցան այս խնդրոյն մէջ, եթէ այսօր այդ պարտքը կատարենք, խնդրոյն վրայ իր ազդեցութիւնը կ'ունենայ:

Ե. ՇԻՐԻՆԵԱՆ ԷՖ. — Գրաւոր հարցմանս մէջ ըսած եմ արդէն, նոյնը կը կրկնեմ բերանացի եւ կը խնդրեմ որ Վարչութիւնը որոց վրայ որ քիչ չատ կասկած ունի, պաշտօն չյանձնէ անոնց:

Ն. ՕՀԱՆԵԱՆ ԷՖ. — Պէտք է այս ժողովը ճանչնայ ու գիտնայ ատոնք, անուն արւէք:

Գ. ԱՍԼԱՆԵԱՆ ԷՖ. — Յանուն Վարչութեան կը բողոքեմ այս խօսքերուն դէմ: Վարչութեան պատկանող մէկը իր ընկերակիցներուն վստահութիւնը կը վայելէ: Ամբաստանողը թող ըսէ որ ով է այդ անձը:

Ե. ՇԻՐԻՆԵԱՆ ԷՖ. — Դուք փնտռեցէք եւ գտէք թէ ո՛վ է Բաղ. ժողովին

այն անգամ որ ի պատասխանի քաղաքապետի թէզքէրէին, իր պատրաստած թագրերով շնորհակալութիւն կը յայտնէր, բայց Ս. Պատրիարքը մերժեց ստորագրել:

Ա. ՆԱԽԱԳԱՀ. — Որովհետեւ այս վեճարանութիւնը պիտի երկարի, կը խնդրեմ որ իւրաքանչիւր երեսփոխան իր եւ ժողովին արժանապատուութիւնը յարգէ եւ այս ժողովին մէջ չյուշուին արժանապատուութեան խնդիրներ: Ինչպէս յայտնի է ամէն ժողովական թեր ու դէմ կարծիքներ կրնայ յայտնել ժողովի մը մէջ, ասոնցմէ ոմանք հարկաւ խնդրոյ մը նպատակով, ոմանք ալ աննպատակ ըլլան: Կը հաւատամ թէ Ազգ. Վարչութիւնը ոչ մէկ ատեն ատանկ շնորհակալութեան թագրեր գրած է եւ եթէ գրուէր իսկ Պատրիարքը չպիտի ստորագրէր:

Գ. ԱՍԼԱՆԵԱՆ ԷՖ. — Կը կրկնեմ Ս. Նախագահի խօսքը, մենք ոչ մէկ ժամանակ շնորհակալութեան զիր գրած ենք, Ազգ. Վարչութիւնը գրած է այնպիսի թագրերներ, զորս ոչ մէկ Վարչութիւն կրցած է տալ:

Ա. ՎՈՒՄԵԱՆ ԷՖ. — Ժողովին ուշադրութիւնը պիտի հրաւիրեմ, բողոքովին տարբեր խնդրոյ մը վրայ, նկատելի է որ Վարչութիւնը հետեւողական տեսակէտ մը չունեցաւ, մինչդեռ պէտք էր Ազգ. Վարչութիւնը գիտնար թէ ինչ գրուած եւ խօսուած է ասկէ առաջ, հետեւաբար ես կը կրկնեմ որ սխալներ գործուած են ասկէ առաջ եւ ցանկութիւն կը յայտնեմ որ Վարչութիւնը ուրիշ անգամ այդպիսի սխալներու տեղի չտայ, իսկ այսպիսի ծանրակշիռ պարագայից մէջ լաւագոյն միջոցն էր որ Վարչութիւնը հրաւիրէր Ազգ. ժողովի բաղկացուցիչ խմբակցութիւններէն եւ քաղաքական կուսակցութիւններէն ներկայացուցիչներ որոց մէջ օրէնսգէտներ ալ կան եւ անոնց հետ խոր-

հրդակցէր: Վարչութիւնները կը փոխուին շարունակ, բայց երեսփոխանները կը մնան, պէտք է միշտ խորհրդակից ունենալ զանոնք, որպէս զի սխալներ տեղի չունենան:

Գ. Տ. ԿԱՐՍՊԵՏԵԱՆ ԷՖ. — Լսելով որ Ս. Էջմիածնի հետ բանակցութիւն կ'ըլլայ, կը ստիպուիմ հարցնելու թէ Կաթողիկոսէն գալիք հրամանին պիտի սպասուի:

Գ. ԱՍԼԱՆԵԱՆ ԷՖ. — Բանկալթիի գերեզմանատան խնդիրը, պողոտան լայնացնելու համար մաս մը հող առնելու խնդիր էր: Բնակահարար չէինք կրնար ընդդիմանալ այս առաջարկին, այլ կը մնար մեզի պահանջել գետնին արժէքը եւ սակորներու փոխադրութեան մասին կրօնական ծէսերը կատարելու համար զիմել էջմիածին: Այդ հրամանը չստացանք դեռ բայց պէտք էր որ նախ եւ առաջ գրամը ստանայինք...

ԶԱՅՆԵՐ ԵԿԵՂԵՑԱԿԱՆԵՐԷ. — Կը բողոքեմ:

Մ. ՀԱՅԿԱԶՆ ԷՖ. — Ազգը զրամի խնդիր չունի:

ԱՏՆՆ. ԷՖ. — Ազմուկը դադրի, որպէս զի խօսքերը լսելի ըլլան:

Տ. Գ. Վ. ՊԱՆՍԵԱՆ. — Ես այս խնդրոյն վրայ խօսելու մարմաջ չունիմ, բայց գործը սխալ ճամբու մէջ է եւ պատուաւոր նահանջի մը պէտք կայ: Որովհետեւ Ասլանեան էֆ. ոչ իբրեւ երեսփոխան յայտնեց իր կարծիքը, ես համամիտ չեմ իրեն: Սակայն հոս արդէն խօսուեցաւ թէ Վարչութիւնը գործը կը վարէ եւ մօտ է վերջակէտը գնելու, թերեւս մինչեւ 48 ժամ խնդիրը իր լուծումը գտնէ, հետեւաբար ես խոհեմութեան հակառակ կը նկատեմ այս կարգի արտայայտութիւնները եւ կ'առաջարկեմ թողուլ գործը Վարչու-

թեան, որպէս զի մինչեւ 8 օր իր պատասխանը բերէ:

ԶԱՅՆԵՐ. — Շատ լաւ բաւական է:

ԱՏՆՆ. ԷՖ. — Ուրեմն Պալաքեան Հօր տուած բացատրութեամբ, ժողովը կը փակէ խնդիրը եւ կը յանձնէ Վարչութեան, որպէս զի շարունակելով իր աշխատութիւնները, արդիւնքը տեղեկագրէ մեզի:

Բ.

ԱՏՆՆ. ԷՖ. — Պէյազճեան էֆ. հարցում ունի պիտի կարգանք իբրեւ վերջին ատենական գործողութիւն:

(Ատենագպիր էֆ. կարդաց հետեւեալ գիրը):

Ազնուաշուք Ատենագպետ էֆէնտի Ազգ. Երեսփ. ժողովոյ

Տեղական լրագիրներէ միոյն մէջ կարդացի թէ, Ազգ. Երեսփոխան Արիստակէս էֆ. Գասպարեան Ատանայի վերջին դէպքին այրած իր կալուածին փոխարժէքը 700 ոսկի, ամբողջապէս գանձած է ապահովագրական ընկերութենէ:

Կը սպասէի որ անմիջապէս հերքուէր այս անհաւատալի լուրը նոյն իսկ Գասպարեան էֆ.է, որ անգամ է այս Պատկ. ժողովին եւ յորում Ատանայի հրկիզեալներու խնդիրը մէկէ աւելի անգամ եկած է:

Կը կարծեմ իրաւունք ունենալ հարցնելու Գասպարեան էֆ.ի, որ ի՞նչ օրինական ձեւով յաջողած է գանձել այս գումարը յիշեալ ընկերութիւնէն որպէս զի թէ ժողովս լուսարանուի եւ թէ Վարչութիւնը, որ խնդրոյն ձեռնարկած է, օգտուի իր թելադրութիւններէն:

Ազգ. Երեսփ. Մագրիգիւղի Ե. Պէյազճեան 10 Փետր. 1912

ԱՏԵՆ. ԷՖ. — Այս գիրը ազգին վերաբերեալ խնդիր է թէ անձնական գործ է:

Ե. ՊԷՅԱԶՃԵԱՆ ԷՖ. — Ես խօսք կ'ուզեմ:

ԱՏԵՆ. ԷՖ. — Խօսք չեմ կրնար տալ, ժողովը պէտք է իր քուէն տայ նախ որ այս խնդիրը անձնական խնդիր կը նկատէ թէ կ'որոշէ վարչութեան ուշադրութեան յանձնել, չեմ կրնար թողուլ որ այսպիսի խնդիրներու շուրջ հրատարակային վիճաբանութիւններ տեղի ունենան:

Ե. ՊԷՅԱԶՃԵԱՆ ԷՖ. — Իրաւունք ունիմ խօսելու:

ԱՏԵՆ. ԷՖ. — Ես այս պարագային մէջ կը կապեմ իրաւունքդ:

(Այս միջոցին ժխոր տիրելով ժողովարանին մէջ, պահ մը դադար արուեցաւ):

Օ Ր Ա Կ Ա Ր Գ Ա.

ԱՏԵՆ. ԷՖ. — Մեր օրակարգի առաջին խնդիրն է, Ատենապետաց Դիւանի տեղեկագիրը՝ ի մասին Երուսաղէմի պատրիարքական ընտրութեան: Այս տեղեկագիրը ասկէ առաջ արդէն ներկայացուած է Պատկ. ժողովիչ եւ անցած է մեր ատենագրութեան մէջ, բայց որովհետեւ այսօր վերստին խորհրդակցութեան նիւթ պիտի ըլլայ, ուստի անգամ մըն ալ պիտի կարդացուի այդ տեղեկագիրը, որպէս զի ամէն ոք կարենայ գիտակցութեամբ յայտնել իր կարծիքը:

(Կարդացուեցաւ ՎՅրդ նիստի ատենագրութեան մէջ հրատարակուած Ատենապետաց Դիւանի տեղեկագիրը):

Ա. ԳԱՍՊԱՐԵԱՆ ԷՖ. — Երբ Երուսաղէմի խնդիրը կուգայ այս ժողովի սե-

ղանին վրայ, անպատճառ կը փոթորկի այս ժողովը, ինչպէս քիչ առաջ փոթորկեցաւ, Օրակարգը յետաձգել տալու նպատակաւ...

Ե. ՊԷՅԱԶՃԵԱՆ ԷՖ. — (Ընդմիջելով) Գատարեան էֆ. նախ եւ առաջ իր մասին ըրած հարցմանս թող պատասխանէ, ճիշդ է, գանձած է Ատանայի հրդեհին այրած շէնքին ապահովագիրն եւ ինչ կերպով...

Հ. ԽՕՃԱՍՍՐԵԱՆ ԷՖ. — Ազգ. ժողովի պատկառանքը պահել անհրաժեշտ է. եթէ անձնական խնդիրներ ունին թող դուրսը կարգադրեն, այստեղ ժողովին արժանապատուութիւնը պահել կարեւոր է:

ԱՏԵՆ. ԷՖ. — Այս դիտողութիւնը ճիշդ է, պէտք է Ազգ. ժողովի պատկառանքը պահել, չեմ կրնար թողուլ որ անձնական խնդիրներով ժամավաճառ ըլլայ ժողովս, շարունակեցէք Գատարեան էֆ.:

Ա. ԳԱՍՊԱՐԵԱՆ ԷՖ. — (Շարունակելով) Երուսաղէմի պատրիարքական ընտրութեան խնդիրը, չափէն աւելի յապաւած խնդիր է, այնպէս որ ընտրութիւնը կատարելու պէտքը խնդրոյ առարկայ ընել իսկ աւելորդ կը նկատեմ: Այս խնդրոյն որչափ ատենէ ի վեր յապաղած ըլլալը ապացուցանելու համար մէկ քանի թուանշաններու յիշատակութիւնը բաւական կրնայ ըլլալ: Յարութիւն Ս. ի պատրիարքական պաշտօնէն ձեռնթափ ըլլալու որոշում տրուած է 3 Յուլիս 1909ին, եւ անոր տեղ Տեղապահ կարգուած է 17 Յուլիս 1909ին: Վախճանած է 25 Հոկտեմբեր 1910ին եւ աթոռը իսկապէս թափուր է այդ թուականէն ի վեր. պիտի ըսէք թէ Տեղապահ մը կարգուած է, բայց զիտէք թէ իր պաշտօնին վրայ կը գանուի՞ թէ ոչ: Այլ սակայն երեւակայեցէք որ Երուսաղէմի նման տեղ մը Հայերը ինչ մեծ զիբք բռնած և միջազգային հանգամանք ունին:

ատեններ կ'ըլլան որ խսիրի կտորի մը համար մեծ վէճեր կը ծագին եւ գործերը մեծ համեմատութիւններ կ'առնեն, մէկ խօսքով այնտեղ թանգագին շահեր կան, որոց պահպանութեան հոգ պէտք է տանի ազգը:

Երուսաղէմի Պատրիարքին գիրքը կը տարբերի նաեւ Պոլսոյ Պատրիարքի գիրքէն: Պոլսոյ մէջ ունինք ժողովներ, տեսուչ խորհուրդներ, հետեւաբար երբ պատրիարքական աթոռը թափուր մնայ, երկարատեն Տեղապահով կրնայ կառավարուիլ: Երուսաղէմի գիրքը այդպէս չէ եւ Տեղապահով մը կառավարելու անպատեհութեան փորձը տեսուեցաւ վերջին անգամ Եաֆայի ազգապատկան կալուածին դրաման խնդրոյն մէջ, որ ծանրակշիռ հանգամանք ունի. այս խնդիրը միայն բաւական է պատասխանը ըլլալու անոնց որոնք կ'ըսեն թէ Տեղապահ մը կայ, պատրիարքական ընտրութիւնը կրնայ մնալ:

Այս խնդրոյն ստիպողութիւնը ինկատի ունենալով 24 Յունիս 1911 թուականով պատրիարքական ընտրութիւնը փութացնելու խնդիր եղաւ այս ժողովին մէջ եւ յղուեցաւ գործը վարչութեան: 1 Յուլիս 1911ին վարչութիւնը այս ժողովին տեղեկացուց թէ ինքն ալ համամիտ է պատրիարքական ընտրութեան՝ որ վերջին ծայր ստիպողական կը նկատէր: Ժողովը ի գիտութիւն լսելէ յետոյ, յատուկ պատուիրակ մը կարգեց եւ Երուսաղէմ զրկեց՝ հսկելու համար: Գիտէք որ այդ թուականին Տեղապահ մը կար Երուսաղէմի մէջ, որ կրնար վարել ընտրական գործերը, բայց ժողովը պէտք տեսաւ յատուկ պատուիրակ մը զրկելու, զիտնալով որ տեղապահութիւնը անուանական պաշտօն էր եւ Պատրիարքութիւնը թափուր էր ու թափուր կը մնար: Ընտրական նախնական գործողութիւնները կատարուեցան զրկուած տեղեկագիրները յանձնուեցան Ատենապետաց Դիւանի ի նախաքննութիւն: Ատենապետաց Դիւանը իր պարտականու-

թիւնը կատարելով 25 Նոյեմբերին զրկեց իր տեղեկագիրը որ կարդացուեցաւ հիմայ, հետեւաբար Նոյեմբեր 25էն սկսելով այս խնդիրը կը մնայ Օրակարգին մէջ եւ անկէ ի վեր շատ կ'ընտոտ պարագայներ ներկայացած են ցարդ:

Սակայն այս խնդրոյն նկատառումը յապաղած է, ժողովին մէջ մէկ քանի որոշ հոսանքներու գոյութենէն: Այդ հոսանքները 2—3ի կրնան բաժնուիլ. մաս մը կայ որ կ'ըսէ թէ որովհետեւ Երուսաղէմի խնդիրը բանամայ է եւ այսօր 30—40,000 ոսկի պարտք կը ծանրանայ վանքին վրայ եւ հոն գտնուողները վատահիվ մարդիկ չեն, հետեւաբար մաքրագործում մը պէտք է, ու անկէ վերջն է որ պէտք է ձեռնարկուի պատրիարքական ընտրութեան: Իսկ ուրիշներ կ'ըսեն, որովհետեւ վանքին արդի վիճակին պատճառներէն մէկն ալ տիրող դրութիւնն է, պէտք է կանոնագիրը վերաքննուի եւ հակակշիռ մը դրուի վանքին վրայ: Առանց ատոր կարելի չէ կանոնաւորել վիճակը, իսկ երրորդ հոսանք մըն ալ կ'ուզէ պահել պատրիարքական ընտրութիւնը, մինչեւ որ պատրիարքական ընտրելեաց ցանկին մէջ գտնուած եկեղեցականներէն մէկը, որուն խնդիրը Օրակարգի երկրորդ խնդիր է, արդարանայ եւ իրբու ընտրելի ներկայանայ:

Առաջին առարկութեան պիտի պատասխանեմ որ, ճիշդ է թէ ազգը 30—40 տարին անգամ մը 30—40,000 ոսկի պարտքի մը առջեւ կը գտնուի, ու ամէնքս համամիտ են որ այլ եւս վերջ գտնէ այս վիճակը, բայց ակնարկուած սաքրագործումը քանի՞ տարիէն կրնայ դուրս ելլել: Վեր ի վերոյ կը յիշեմ որ հաշիւներու քննութիւնը 4—5 տարիէ ի վեր սկսած է եւ մինչեւ որ լրանայ 8—10 տարի կը տեւէ, հետեւաբար այդ պատճառաւ անկարելի բան է որ ընտրութիւնը մինչեւ այն ատեն յետաձգուի եւ Երուսաղէմի շահերը վտանգուին, հետեւաբար Ազգ. ժողովը չկրնար համամիտ գտնուիլ այդ

տեսակէտին : Գալով կանոնագրի խնդրոյն, երեք անգամ կանոնագիրը վերաքննուած է եւ երրորդ կանոնագիրը պատրաստուած է 1883ին, ըսուեցաւ որ կանոնագիրը արդէն իսկ գործադրուած չէ, բայց ես չեմ գիտեր որ պահանջուած կերպով կանոնի հանգամանք ունի՞ այս կանոնագիրը եւ որ կանոնագիրը անթերի կերպով գործադրուած է որ այդ կանոնը գործադրուի, այժմ ընտրելեաց յանկ մը պատրաստուած եւ հոս մեզի եկած է, գործադրութեան մէջ գտնուած կանոնագրին համաձայն եւ մենք պարտաւոր ենք այդ հիման վրայ ընտրութիւն կատարել : Երեւի իրան մը ըսաւ որ 15 օրուան մէջ կանոնագիր մը կրնայ պատրաստուիլ : Ես կը զարմանամ այս կերպ յայտարարութեանց վրայ, աչքի առջեւ բերելով մասնաւոր որ այս կանոնագրին վերջին յօդուածը կը տրամադրէ վերաքննութեան համար Միաբանութեան հաւանութիւնը, հետեւաբար վերաքննեալ կանոնագիրը անկէ է որ պիտի գայ, եւ մենք պիտի վաւերացնենք, հետեւաբար բանաւոր եւ գործնական չէ նաեւ այս առաջարկը :

Իսկ գալով երրորդ պարագային՝ տակաւին քննիչ յանձնաժողով չէ կազմուած ամբաստանութեանց քննութեան համար հետեւաբար յայտնի չէ թէ երբ պիտի աւարտի գործը : Հետեւաբար այս երրորդ պարագան ալ պատճառ չկրնար ըլլալ յետաձգելու ընտրութիւնը : Այս տեսակէտներով, մենք իբրեւ Ատենայեաց Դիւան թէեւ իրաւունք ունինք փոփոխութիւն ընելու այս ցանկին մէջ եւ կամ նոյնութեամբ ընդունելու, սակայն բացի ընտրելիներէ մէկէն որ դատաստանի տակ կը գտնուի, միւսները անփոփոխ պահելով, թէ եթե անոն ցանկը եւ թէ վարչութեան վարչատեսակ եռանուն ցանկը ձեր քուէին ենթարկելու պէտք տեսանք : Այս բացատրութիւնը տուի որպէս զի նորանոր վիճարանութեանց զուռ չբացօրի : Ատենայեաց Դիւանը ընտրութեան մասին իր առաջարկները ներկայացուցած է, կամ

պիտի մերժէք կամ պիտի ընդունիք տեղեկագրին եզրակացութիւնը, բայց ընտրութիւնը յետաձգելի չէ եւ կ'առաջարկենք որ յառաջիկայ ուրբաթ կատարուի պատրիարքական ընտրութիւնը անպայման կերպով եւ միակ օրակարգով մը :

Ն. ՕՂԱՆԵԱՆ ԷՑ. — Երուսաղէմի խընդիրը 70-80 տարիէ ի վեր գրադեցուցած է ազգը եւ առիթ առած է գծաութիւններու : 1860 թուականին Յովհաննէս Պատրիարք կը վախճանի Ազգ. Սահմանադրութիւնը նոր հաստատուած էր այդ թուականին ու պատրիարքական ընտրութեան պէտք կը ներկայանայ, նշանաւոր մտքեր եւ Սէրվիլէնի պէս զարգացած անձեր Պատրիարքը դուրսէն ընտրելու կուսակից կը ներկայանան, սակայն յանկարծ փոթորիկը կը պայթի եւ ժողովրդեան մէջ գծաութիւններ, վէճեր ծայր կուտան : Լուսաւորեալի եւ Խաւարեալի վէճերը թարմ են տակաւին շատ մտքերու մէջ : Գասպարեան էֆ. յիշեց թէ Ատենայեաց Դիւանը իր տեղեկագիրը բերած է եւ թէ անմիջապէս հարկ է պատրիարքական ընտրութիւն կատարել, սակայն չյիշատակեց բնաւ անցեալ նիստին ժողովին այն եզրակացութիւնը՝ որ Երուսաղէմի վանքին հակակշիռը կամ վերին հսկողութիւնը վանականներէն առնուի եւ կեդրոնը ստանձնէ, որպէս զի օր մըն ալ 40-50,000 ոսկի պարտքի մը վրայ խորհելու հարկին մէջ չգտնուինք : Եթէ Գասպարեան էֆ. ի ըսածին պէս հիմայ պատրիարքական ընտրութիւն պիտի կատարենք, եւ ընտրեալ Պատրիարքը պիտի պաշտօնավորէ կանոնագրին մէջ իրեն տրուած իրաւաստութեամբ, այդ բացարձակ իրաւաստութիւնը պատճառ կրնայ ըլլալ վերստին պատրաստելու մեզի համար պարտքի անակնկալներ : Ուստի իմ կարծիքս այն է որ ինչպէս տրամաբանութիւնն ալ կը պահանջէ, այդ իրաւաստութիւնն այս ժողովին տրուի նախ և առաջ եւ յետոյ ընտրութեան վրայ խորհուի : Յետոյ Շահրիկեան էֆ. այսօր բացակայ

է՛ պէտք է իր ներկայութեան նկատուութեան առնուի իր հարցապնդումը եւ յետոյ այս խնդրոյն համար որոշում մը տրուի, սակէ զատ պատրաստուած եթեանուն ընտրելեաց ցուցակը չեմ կրնար ընդունիլ որ արժանաւոր անձերէ կը բաղկանայ, պէտք է ընտրելիներու վրայ մանրամասն տեղեկութիւններ առնուի եւ այնպէս քուէ տրուի, այս է իմ եզրակացութիւնս, պէտք է աշխատիլ որ հապճեպով ընտրութիւն տեղի չունենայ :

ՏՐ. Ն. ԹԻԻԼԵԱՆ ԷՑ. — Ատենայեաց Դիւանի անդամ ըլլալով, այդ ցանկը կազմուած ժողովին ներկայ չեմ գտնուած հետեւաբար կը հարկադրուիմ իմ դիտողութիւններս այստեղ ներկայացնել : Որպէս զի Գասպարեան էֆ. ի ըսածը ճիշդ ըլլար պէտք էր քննուէր նախ և առաջ թէ Երուսաղէմի մէջ գումարուած ժողովին կազմը օրինաւոր էր : Սահմանադրութիւնը կ'ըսէ թէ, երբ Երուսաղէմի Պատրիարքը կը վախճանի, Միաբանութիւնը գումարուելով Տեղապահ մը կ'ընտրէ, որուն նախագահութեամբ միաբանական ժողով գումարուելով, ընտրելեաց ցանկ կը պատրաստուի : Այս տրամադրութիւնը գործադրուած է, ոչ, որովհետեւ այստեղ միաբանութեան գլուխ գտնուող եկեղեցականը ըստ սահմանադրութեան լոկ վեֆիէ է եւ մենք այդ անունով զրկած ենք : Գալով Ատենայեաց Դիւանի կատարած փոփոխութեան, ես այդ գործին մէջ իրաւասու չեմ գտներ զինքը, որովհետեւ եթէ եթե անոն ցանկին ճշմարտան համարեի եւ ջնջեի, մենք պարտաւոր պիտի ըլլայինք մնացեալ մէկին վրայ ընտրութիւն կատարելու...

ՉԱՅՆԵՐ. — Այդպէս բան չըրաւ սակայն, կատարածին վրայ խօսեցէք :

ՏՐ. Ն. ԹԻԻԼԵԱՆ ԷՑ. — (Շարունակելով) Ըստ իս այդ ցանկին մէջ գտնուածը

ամբաստանեալ է կամ ոչ պէտք է թողուլ այս ժողովին գնահատման եւ ամէն ոք ազատ ձգել որ իր քուէն տայ եթեանուն ցանկին վրայ, ապա թէ ոչ պիտի հարկադրուինք այդ ցանկը վերադարձնել՝ որպէս զի ամբողջացուի եթեանունի : Ես առանց ատոնց պէտք ձգելու, համամիտ եմ Գասպարեան էֆ. ի որ ընտրութիւնը կատարուի առանց սպասելու, զրկուած եթեանուն ցանկին վրայ :

Տ. ԵՉԵԻԿ Վ. ՊԱՊԱՆԱՆ. — Չանազան երեսփոխաններ խօսեցան այս խնդրոյն վրայ, որը գործին պատմականը ըրաւ, ուրիշ մը այսօրուան կացութեան վրայ խօսեցաւ, ես չպիտի անդադրանամ ատոնց ոչ ալ իմ սահմանէս դուրս պիտի ելլեմ, այլ պիտի խօսիմ միայն Օրակարգի վրայ եւ պիտի խնդրեմ որ յարգուի Երուսաղէմի միաբանութեան արժանապատուութիւնը՝ յիշելով անոնց ազգին մատուցած ծառայութիւնները իբրեւ դաւառական առաջնորդ, Տեղապահ եւ իբրեւ ազգի ու եկեղեցւոյ պաշտօնեայ : Դանալով պատրիարքական ընտրութեան խնդրոյն՝ կուգամ յիշեցնել թէ, Երուսաղէմի ներքին կանոնադրութիւն մը կայ, որուն մէջ ճշգրտած է մեր ընելիքը, Պատրիարքական ընտրութեան համար նախնական գործողութիւններ կան որոնք կատարուել են : Միաբանական ընդհանուր ժողով պէտք է գումարուի եւ այդ ժողովն ալ գումարուած է, ես կը կարծեմ թէ գործին մէջ շփոթութիւններ կան, վարչութիւնը իր կողմէն լիազօր պատուիրակ մը զրկել է աւելցնելով արդէն գոյութիւն ունեցող պարտքերուն վրայ բաւական գումար մը : Եւ որովհետեւ լիազօրութիւնը հոն կը կայանար որ յանուն վարչութեան պէտք եղած կարեւոր թելադրութիւնները եւ դիտողութիւնները ներկայացնէր, կը սպասուէր որ ըստ այնմ խօժասարեան էֆ. ըներ այն բոլոր դիտողութիւնները, որոնք օրէնքի անունով կ'ըլլան հիմայ : Ընդհակառակը՝ խօժա-

սարեան էֆ. հոն զնաց նախնական գործողութիւնները կատարեց եւ ընտրական տեղեկագիրը ստորագրելով վերադարձաւ : Եթէ կատարուած գործողութիւնը թերութիւն մը ունենար անշուշտ պիտի ճշդէր, բայց իբրեւ լրացած գործ բերաւ տեղեկագիրը այստեղ, որ արդարեւ 88ի կանոնագրին գործադրութեան տարբեր բան մը չէր : Խօսակցութեան էֆ. լիազոր կերպով վարչութիւնը կը ներկայացնէր եւ մասամբ ալ երեսփոխանութիւնը, քանի որ ինքն ալ յարգուած երեսփոխան մըն է : Արդ ի՞նչպէս կ'ըլլայ որ վարչութիւնը լիազոր պատուիրակին պատրաստել տուած ցանկին մէջ անտեղութիւն չտեսած ատեն սկզբունքի տեսակէտով և օրէնքի անունով սրբագրութիւն կ'առաջարկուի այստեղ : Ես լիազոր պատուիրակին կը թողում որ պաշտպանէ իր պատրաստած ցանկը, ու միայն զիտել տալով կը բաւականամ թէ՛ քանի որ Շահրիկեան էֆ. բացարձակ կերպով ըսաւ որ Երուսաղէմի միաբանութիւնը ծայրէ ծայր ամբաստանուած է, ի՞նչպէս կրնայ ըլլալ որ, նոյն միաբանութեան ներկայացուցած զիրը լրացուցիչ գործ կը համարուի եւ անոր վրայ հիմնուելով վարչութիւնը առաջարկ կը բերէ մեզի Պատրիարք ընտրելու համար : Ես պահանջող չեմ որ անմիջապէս ընտրութիւնը կատարուի, կրնանք յետաձգել, ես նախանձախնդիր եմ միայն վանքին շահուն եւ արժանապատուութեան եւ գիտեմ թէ այս դարձուածները ի՞նչ բարոյական վնասներու գուռ կը բանան : Կը կրկնեմ անգամ մըն ալ որ այս ժողովը օրէնքին իրեն տուած իրաւունքի սահմանին մէջ պէտք է վերջացնէ այս խնդիրը, աչքի առջեւ ունենալով նախապէս իր կատարած գործողութիւնը եւ հետեւելով անոնց :

Հ. ԽՕՃԱՍՍՐԵԱՆ ԷՖ. — (վարչութեան պատուիրակ) Պատրիարքական ընտրութեան մասին ժողովը թիւրիմացութիւններ ունի, նախ հարկ է զանոնք

սրբագրել : Պատրիարքական ընտրութեան հրահանգը այս ժողովն էր որ տուաւ : վարչութեան, երեք երեսփոխաններու կողմէ այն ատեն եկած հարցապնդման վրայ՝ ընտրութիւնը փութացնելու համար եւ վարչութիւնը շատ ուղիղ ընթացք մը ունեցաւ, ժողովին կամքը գործադրելով : Սխալ է նաեւ կարծել թէ միաբանութիւնը իբրեւ ամբաստանեալ՝ անզօր է ընտրութիւն կատարելու : Երբ Ազգ. ժողովը կ'որոշէ ընտրութիւնը եւ միաբանութեան կուտայ ընտրութեան իրաւունք, այդ իսկ կ'ապացուցանէ թէ չէ ընդունած ամբողջ միաբանութեան ամբաստանեալ ըլլալու տեսակէտը եւ ներողամտութեամբ շարժած է անոնց նկատմամբ : Դալով Եզնիկ վ. Բ այն ակնարկութեան թէ, Գէորգ Եպսկ. անունը անցած է իմ ներկայութեամբ գումարուած միաբանական ժողովի ցանկին մէջ, կուզամ պատասխանել թէ՛ քանի որ Գէորգ Եպսկ. Պոլսոյ մէջ կատարուած քուէարկութեանց ատիթով համագումարի մասնակցելու հրաւէր կ'ընդունէր եւ քուէարկութեան կը մասնակցէր, ես Երուսաղէմի մէջ չէի կրնար զլանալ իրեն ընտրող եւ ընտրելի ըլլալու իրաւունքը, նոյն իսկ իր պատկանած միաբանութեան մէջ : Իր պարագան տարբեր էր Ղեւոնդ վ. Բ պարագայէն : Աւելի վերջն էր որ Գէորգ Եպսկ. ամբաստանեալ նկատուելով իր մասին քննութիւն մը կատարելու եւ դատական մարմին մը ընտրելու որոշում տրուեցաւ : Դալով թիւրիան էֆ. Բ այն արկութեան թէ Դանիէլ Ս. իբրեւ վեհապետ նախագահած է այդ ժողովին, ես կը մերժեմ այդ արկութիւնը, որովհետեւ Տեղապահը կ'ընտրուի երկու պարագայի մէջ, նախ Պատրիարքի մահուան եւ երկրորդ Պատրիարքի ամբաստանութեան պարագային եւ ժողովս այս երկրորդ պարագային մէջ ընտրեց զինքը իբրեւ Տեղապահ եւ կը զարմանամ որ մինչ կառավարութիւնը այժմ այդ հանգամանքով կ'ընդունի զինքը, մեղմէ կը գտնուին այնպիսիներ որ կը մերժեն...

ՏՐ. Ն. ԹԻՒԼԵԱՆ ԷՖ. — (Ընդմիջելով) Կը կրկնեմ խօսքս վեհից է :

Պ. ՓԱՓԱՋԵԱՆ ԷՖ. — Ազգ. ժողովը Տեղապահ ընտրեց զայն, դուն կառավարութեան փաստաբանն ես, դուք կը դաւէք ազգը :

ՏՐ. Ն. ԹԻՒԼԵԱՆ ԷՖ. — Ձեր առած զրամները նայեցէք դուք էք դաւաճանը :

ԱՏԵՆ ԷՖ. — Կը հրաւիրեմ թիւրիան էֆ. որ ետ առնէք դաւաճան բառը :

ՏՐ. Ն. ԹԻՒԼԵԱՆ ԷՖ. — Նախ անկայ ըսաւ :

Պ. ՓԱՓԱՋԵԱՆ ԷՖ. -- Ես ետ կ'առնեմ, բայց դաւաճան է այն որ այս ժողովին իրաւունքներուն ղէմ կը խօսի :

ԱՏԵՆ. ԷՖ. — Ետ առաւ դաւաճան բառը :

ՏՐ. ԹԻՒԼԵԱՆ ԷՖ. — Ես ալ իմ ըսածս ետ կ'առնեմ, բայց դաւաճան է այն որ ազգին զրամը կ'ուտէ :

Լ. ՍՍԱԹՃԵԱՆ ԷՖ. — Անուն տուէք, ո՞վ է ազգին զրամները ուտողը, մեր ճակատը բաց է :

Հ. ԽՕՃԱՍՍՐԵԱՆ ԷՖ. — (Շարունակելով) Պատրիարքական ընտրութիւնը սերտօրէն առնչութիւն ունի Երուսաղէմի ընդհանուր խնդրոյն հետ : Ազգը պէտք է որոշապէս զիտնայ թէ ի՞նչ է Երուսաղէմի խնդիրը եւ ի՞նչ կը սպասէ ընտրած Պատրիարքէն :

Երուսաղէմական խնդիրը ինձի համար նը ներկայանայ երկու տեսակէտով. — Ա. Ազգային փառքի, Երուսաղէմի մէջ մեր վայելած իրաւանց տեսակէտով. — Բ. Երուսաղէմական խնդրի վիճակին մէջ :

Սէրվիլէն էֆ. շատ իմաստուն խօսք մը ըրած է այս ժողովին մէջ թէ՛ «Միակ վայրը, ուր մարդ Հայ ըլլալուն համար հպարտ կը զգայ ինքզինքը, Երուսաղէմն է» եւ ամէն անոնք որ հոն կ'այցելեն, միշտ այս տպաւորութիւնը կը կրեն : Այդ փառքը սակայն առանց զոհողութեան եւ առանց պայքարի չէ : Հոն միաբանութիւն մը կայ, ամէն ժամանակ անձնուիրութեամբ պաշտպանող այդ իրաւունքները : Չբաւեր միաբանութեան մասին աննպաստ կարծիքներ յեղիդել, իրաւունքներ եւ փառքեր ալ ունի՝ զորս պէտք չէ անտեսել : Տարիներէ ի վեր օտար հզօր մրցակցութեանց ղէմ, այդ իրաւունքներու պաշտպանութիւնն ալ զիւրին եւ հեշտ գործ մը չէ : Հոն զոհողութիւն եւ անձնուիրութիւն պէտք է, եւ այդ միաբանութիւնը չէ վարանած վայրկեան մը ազգային պատիւը բարձր բռնելու : Ես տեսայ հոն միաբաններ, որոնք պարծանքով իրենց վէրքերուն սպինները ցոյց կուտային, սահմանազուխը պաշտպանող զինուորի մը պէս մեր իրաւունքները պաշտպանած միջոցին : Եւ ասոնք, Երեսփոխան Տեարք, հազարաւոր ոսկիներ զիջող միաբանները չեն, այլ ընչազօրեղները :

Չարատանջ աշխատութիւն մը կայ հոն. ամէն զիւր պարտաւոր է միաբանութիւնը հսկել այդ իրաւանց պաշտպանութեան համար, երբ մենք մեր հանդիսաթիւն ու հաճոյքին կը նայինք : Եւ մեր հոն վայելած զիրքն ու փառքը, անկորուստ իրաւունքները, անոնց զոհողութեան կը պարտինք, այս զոհողութիւններով կրցեր են զարբրով պաշտպանել այս վանքը : Բացատրելու համար թէ ի՞նչ կ'արժեն Երուսաղէմի մեր իրաւունքները, կը բաւէ միայն յիշել թէ երբ Գերմանիոյ կայսրը Պոլիս այցելեց, չուղեց Կ. Պոլսոյ մէջ ընդունիլ Յունացու Հայոց Պատրիարքները, բայց երբ Երուսաղէմ այցելեց, հոն առաջին այցելութիւնը Հայոց վանքին տուաւ : Արդար ըլլալու համար նաեւ պէտք է յիշենք թէ երբ մէկ կողմէն վանքին գոյացուցած

պարտքին վրայ կը խօսինք, դատապարտելով միաբանութիւնը, պէտք է յիշենք սակայն թէ նոյն միաբանութիւնն է որ յետ մահու իր հարստութիւնը վանքին թողով, անհամեմատ բարձրացուցած է վանքին կալուածական հասոյթը: Ըստ գեղեցիկ բացատրութեան Ստեփան փաշայի, թէ երբ միաբանութիւնը աջ ձեռքով կը գողնայ, յետ մահու ձախով նորէն վանքին կը դարձնէ: Սակայն կային նաև 50 տարուան միաբաններ որ 50 փարայ չունէին բայց չարքաջ ու անձուէր էին: Եւ սակայն պիտի ըսէք, միաբանութիւնը սուրբ տեղեաց իրաւունքները պաշտպանելուն համար հարկ էր որ թոյլատրենք անպայման գործելու այս գեղձումները: Անշուշտ, Տեարք երեսփոխանք, այդ եզրակացութիւնը չէ որ կը սպասէք ինձմէ: Երուսաղէմի արդի անկերպարան վիճակը, հետեւանքն է տարիներէ ի վեր տիրած յոռի դրութեան: Եթէ միաբանութիւնը դատապարտելի է այդ մասին, մենք, Ազգ. Ժողովս անմասն չենք այդ դատապարտութենէն: Եւ պէտք է քաջութիւնը ունենանք ինքզինքնիս ալ դատապարտելու, մեր լուս համակերպութեանը համար: Հարկը հազարաւոր ոսկիի գործառնութիւններ կ'ըլլան, կալուածներ կը վաճառուին, տարեկան 12,000 ոսկիի մատակարարութիւն մը կայ, այս ամենափափուկ գործը յանձնած ենք միաբանութեան մը, որ զարգացած չէ: Գրեթէ 30 տարիներէ ի վեր տիրող դրութիւն մը եղած է վանքին մէջ մտաւորականութիւնը սպաննել եւ ելմտական գիտակցութենէ զրկել միաբանութիւնը, մէկ խօսքով տգէտ պահել եւ երբ այսօր, սրտի դառնութեամբ հանդիսատես կ'ըլլանք վանքի մը մտաւորականութեան սնանկութեան պէտք է խոստովանինք թէ մենք ալ պատասխանատու ենք առ այդ: Սահմանադրական այս չորս տարուան չրջանին մէջ ի՞նչ ըրինք վանքը բարոյապէս բարձրացնելու համար. — Սին վէճերէ դուրս ոչինչ:

Մարդ երբ կը մտնէ այդ հեղձուցիչ մթնոլորտին մէջ կ'ափսոսայ: Հին առնները 4000է աւելի ձեռագիր պատրաստող, աշխատող, միաբանութիւն մը ունեցեր է վանքը, այսօր անոր յաջորդած է սերունդ մը որ փոքր բացառութեամբ, այդ ձեռագիրները ընթեռնելու վիճակին մէջ չէ: Կը զարմանաք, Տեարք, երբ դեռ այսօր վանքին հոյակապ տպարանին մէջ «Պղնձէ քաղաք» եւ «Երազահան» կը տպեն: Ըմբռնեցէք այլ եւս թէ ո՞րչափ ինկած է մտաւորականութիւնը: Ի՞նչ ելմտական զարգացում տուած ենք միաբանութեան, բարւոք մատակարարութիւն մը սպասելու համար: Եւ ե՞րբ կատարած ենք արդէն մեր հակակշիռ իրաւունքը: 1900ին Ղեւոնդ Վ. օրով Ազգ. Երեսփոխանքը զեօնուր ութը հազար ոսկի ծախսելով փակած էինք վանքին պարտքը, սակայն հինգ տարի վերջ Ղեւոնդ Վ. վանքէն հեռացման միջոցին տասնըվեց հազար ոսկիի պարտք մը գոյացած էր: Ղեւոնդ Վ. մեկնելէն վերջ, վանքին եօթը տարուան մէջ իրական պարտքը բարձրացած էր երեսուն երեք հազար ոսկիի: Հակառակ կալուածական հարոյթներու երեք չորս հազար ոսկին, ութը հազար ոսկու ըրարձրացած ըլլալուն: 1904ին կալուածներուն հասոյթը երբ 4000 ոսկի էր, 7800 ոսկիի ելաւ: Նոյն իսկ վերջացող տարուան մէջ 8500 ոսկիի եւ տարեկան պիւտճէն 14 000 ոսկիի: Վանքին յոռի վիճակը մեր անարդարանալի անտարբերութեան արդիւնքը եւ մեր լոյն համակերպութեան դատապարտութիւնն է: Կը տեսնէ՞ք, Տեարք, թէ հաշուեպահանջ եւ հաշուեխոյս, ազնիւ բացառութեամբ, միեւնոյն ջուրի ձուկերն են: Եւ ցորչափ Ազգ. Ժողովը վանքին հիմնական վերակազմութեան չզիմէ, դրութիւնը միշտ նոյնը պիտի մնայ, եւ պարտքը օրէ օր յարածուն:

Ազգ. Ժողովները 1860էն սկսեալ կանոնադրութիւններ տուած են: Առաջինը

ամենէն իմաստունը եւ հեռատեսը եղած է: 1865ի Ազգ. Ժողովը ա ելի հեռանկատ միաբանութեան տուած կանոնադրով սահմանափակած է անոնց բացարձակ տիրապետութիւնը: Նախ միաբանութիւնը տարեկան 500 ոսկիէ աւելի փոխառութիւն մը կնքելու իրաւունք չունէր, երկրորդ կեդրոնի կողմէ վերահսկողի մը իրաւունքը ապահոված էր իրեն, ինչպէս նաև Ժառանգաւորաց վարժարանի ծրագրի պատրաստութեան իրաւունքը: 1880ի կանոնադրով այդ իրաւունքը Միաբանական Ընդհ. Ժողովին արուեցաւ, իսկ 1888ի կանոնադրով միմիայն Տնօրէն Ժողովոյ, Բայց Տնօրէն Ժողովը ալ շատ անգամ անուանական է, մէկն է որ կ'իշխէ ու միւսները կը հպատակին անոր: Այդ օրէնքի ազդեցութեամբ է որ Միաբանութիւնը ինքզինքին իրաւունք տուած է աննկատ փոխառութիւններու եւ կալուածական վաճառումներու ձեռնարկել, եւ որուն ընական հետեւանքն է արդի պարտքերուն ամբարտակը: Հոս՝ Բերայի կալուածոց Հոգաբարձութեան պէս ազդին բացարձակ վստահութիւնը վայելող անձեր, հարիւր ոսկույ կալուած մը ծախելու համար, հարկ է որ Տնտեսականի և Վարչութեան հաւանութիւնը ստանան: Մինչդեռ Երուսաղէմի մէջ Տնօրէն Խորհրդոյ մէկ քանի վարդապետներ, օրէնքով արտօնուած են 30—40,000 ոսկիի կալուած վաճառելու եւ պարտքը ընական է որ կ'աճի երբ տարիներ կ'անցնին: Իմ եզրակացութիւնս սա է թէ միաբանութեանէն աւելի, դրուած օրէնքներն են որ պատճառ են այս գեղձումներուն: Չեղձում իսկապէս գոյութիւն ունի, բայց վերջին տասը տարիներու մէջ կալուածական հարոյթներու բարձրացումը միաբանութեան չնորհիւ է: Եթէ միաբանութիւնը 30,000 ոսկի պարտք ձգած է անձնապէս թողած հարստութիւնն ալ եթէ նկատի ունենանք 30,000 ոսկիէն աւելի է: Եթէ երբէք կեդրոնը խիստ հակակշիռ մը հաստատէ Երուսաղէմի խնդիրը յու-

սահատական չէ եւ Երուսաղէմի միաբանութիւնը մեր ատելութեան արժանի միաբանութիւն մը չէ: Որոշ բանաձեւով մը պէտք է ջնջել միաբանական կանոնագրի այն յօդուածը, որ անոր իրաւունք կուտայ իր կանոնագիրը ինքն իսկ սրբագրելու, միեւնոյն առնէ միաբանութիւնը պէտք է զրկել իր վայելած ելմտական բացառիկ իրաւասութենէն եւ վստահ եմ թէ իրենք ալ պիտի ընդունին, եւ այդ իրաւունքը տալ կեդրոնին մէջ կազմուած յատուկ խնամակալութեան մը, եւ այնուհետեւ կատարել միայն պատրիարքական ընտրութիւնը, վստահ հաստատ պէտք է գիտնալ որ ով որ ալ ըլլայ Պատրիարք չի կրնար անհատական հեղինակութեամբ բարեկարգել վանքը: Այս միջոցով է որ կը կարծեմ, վերջ կը գտնէ Երուսաղէմական խնդիրը, եւ այդ փառա որ վանքը իսկապէս կը դառնայ ազգին փառքը: ԱՏՆՆ. ԷՅ. — Խօժասարեան էֆ. խօսքերը պէտք եղած կերպով լուսաբանեցին Ժողովս, հետեւաբար այլ եւս առանց երկարելու վիճաբանութիւնը, կը ներկայացնեմ ձեզ հետեւեալ բանաձեւերը: (Ատենադպիր էֆ. կարդաց հետեւեալ բանաձեւերը). ԲԱՆԱԶԵԻ Ժողովս ընդունելով Երուսաղէմի միաբանական կանոնագրի վերաքննութեան անմիջականութիւնը, կ'որոշէ նախ եւ առաջ կատարել պատրիարքական ընտրութիւնը յատաշիկայ ուրբաթ: Ա. Յ. Գասպարեան Երուսաղէմի պատրիարքական ընտրութեան մասին թեր ու գէմ կարծիքներ լսելէ վերջ կ'առաջարկեմ նախապէս միա-

բանական ներքին կանոնադրի Յ1րդ յօդուածին մատակարարութեան մասը և վերաքննութեան վերջին յօդուածները ջնջել եւ յանձնել նախաձեռնութեան դիւանին որ ժողովին մէջ յայտնուած կարծիքներու համաձայն փոփոխութիւնը կատարելով չուսով բերէ ժողովին :

**Հ. Խօնասարեան**

**Դ. ՏԷՐ ՄՈՎՍԷՍԵԱՆ ԷՖ. —** Խօնասարեան էֆ. կ'ըսէ որ կանոնադրին երկու յօդուածները ջնջենք, ժողովս չուսումնասիրեց տակաւին այս խնդիրը այլ համամիա գտնուեցաւ որ պէտք է բարեփոխութիւն կատարուի: Ես խիստ կը գտնեմ այդ տրամադրութիւնը, մանաւանդ որ պատրիարքական ընտրութեան մասին Առեւտակետաց Դիւանի տեղեկագիրը Օրակարգ անցուցած ենք, մենք խօսելիք ունինք այդ տեղեկագրի մասին եւ այս

ժողովը ընդունի կամ մերժէ զայն, պէտք է որ վիճարանութիւն տեղի ունենայ: Իսկ պալով երկու յօդուածներու ջնջման, պէտք է սրբագրութիւնները ըլլան եւ ժողովս առանձին խորհրդակցի անոնց մասին :

**Հ. ԽՕՃԱՍՍՐԵԱՆ ԷՖ. —** Արդէն խընդիրը պիտի երթայ նախաձեռնութեան Դիւանին եւ այնտեղ պիտի քննուի, եթէ չընդունուի այնտեղ, կը վերադարձուի ժողովիս :

(Ատենապետ էֆ. քուէի զնելով Խօնասարեան էֆ.ի բանաձեւը ընդունուեցաւ միաձայնութեամբ եւ ատենը փակուեցաւ ժամը 5/ին) :

Ատենագիրը

Ատենապետ

Մ. ՆԱԹԱՆԵԱՆ

Մ. ԱԶԱՐԵԱՆ

